



# ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Ֆինանսական կրթությունը դպրոցում

Հետազոտող ուսուցիչ՝ Հասմիկ Ղազարյան

Մեծամորի թիվ 1 հիմնական դպրոց ՊՈԱԿ

Մենթոր ուսուցիչ՝ Շուշան Վարդանյան

## Բովանդակություն

1.Ներածություն -----	3
2. Ի՞նչու է կարևոր ֆինանսական գրագիտությունը -----	5
3. Հետազոտության ընթացքը-----	9
5.Եզրակացություն-----	17
6.Գրականություն-----	19
7.Հավելված-----	20

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արդի ժամանակահատվածում յուրաքանչյուր անձ առօրյայում և կենսագործունեության տարբեր ոլորտներում շարունակ առնչվում է ֆինանսական տարբեր խնդիրների հետ, որոնց թվում առավել մեծ կենսական նշանակություն ունեն հատկապես անձնական ֆինանսների կառավարմանը վերաբերվող խնդիրները: Դրանք արդյունավետ լուծելու համար պահանջվում է ունենալ ֆինանսական գրագիտության բավարար մակարդակ,ինչը կարող է ձեռք բերվել միայն նպատակային կրթական ծրագրերի շնորհիվ: Ֆինանսական կրթությունը մարդու մեջ ձևավորում է՝ նրա ողջ կյանքի համար համապիտանի կարողունակություններ, և այն իրականացնող առանցքային օղակը հանրակրթական դպրոցն է, որտեղ հնարավոր է դեռ վաղ տարիքից ներդնել անձնական ֆինանսները կառավարելու սովորույթ,այն դարձնել կենսակերպի անբաժանելի մաս և ձևավորել որպես մշակույթ:

Մաթեմատիկայի այժմյան դասընթացը շատ տարերային և անկազմակերպ ձևով է շոշափում աշակերտների ֆինանսական գրագիտությանը վերաբերվող հարցերը ուստիև չի օգտագործվել մաթեմատիկայի կրթական այն հսկայական ներուժը, որը հնարավորություն կընձեռեր խորությամբ բացահայտել ուսումնական առարկայի կիրառական նշանակությունը՝ ապահովելով կրթության բովանդակության կապը սովորողների կրթական կարիքների հետ: Այդ պատճառով աշակերտները դպրոցն ավարտելիս չեն կարողանում կայացնել պատասխանատու որոշումներ իրենց անձնական ֆինանսների վերաբերյալ:

2014 թ. նոյեմբերի 13-ի ՀՀ կառավարության N47 նիստի արձանագրային որոշմամբ հավանության արժանացավ ՀՀ-ում ֆինանսական կրթության ազգային ռազմավարությունը (ՖԿԱՌ), որում ներառված <<Ֆինանսական կրթությունը դպրոցում>> ծրագիրը՝ սահմանված է որպես առաջնային կարևորություն ունեցող: <<Ֆինանսական կրթությունը դպրոցում>> ծրագրի նպատակը ՀՀ կրթական համակարգի և համընդհանուր մոտեցումներին համահունչ արդյունավետ ֆինանսական կրթության ծրագրի իրականացման միջոցով սովորողների անձնական ֆինանսների կառավարման կարողությունների զարգացումը:

2015-2016թթ ընթացքում ՀՀ ԿԲ սպառողների շահերի պաշտպանության և ֆինանսական կրթման կենտրոնը՝ համագործակցելով ՀՀ ԿԳՄՍ նախարարության,

կրթության ազգային ինստիտուտի, Երևանի քաղաքապետարանի, Խնայքանկերի միջազգային ինստիտուտի համագործակցության միավորման (ԽԲՄՀՄ) հայաստանյան ներկայացուցչության <<Հայաստանի պատանեկան նվաճումներ>> հասարակական կազմակերպության հետ մշակել <<Սովորողների ֆինանսական կոմպետենցիաների մատրից>> փաստաթուղթը, որը սահմանում է սովորողների համար անհրաժեշտ նվազագույն ֆինանսական գիտելիքը, հմտությունները, վերաբերմունքը և վարքագիծը ըստ կրթական մակարդակների:

Ֆինանսական կրթությունը ներառում է 7 թեմատիկ ոլորտներ. 1. Ընդհանուր տնտեսական հասկացությունների տիրապետում, 2. Անձնական բյուջեի կառավարում, 3. Խնայողություններ և երկարաժամկետ պլանավորում, 4. Պարտքերի կառավարում, 5. Ֆինանսական ծառայությունների արդյունավետ ընտրություն, 6. Անձնական իրավունքների պաշտպանություն, 7. Ֆինանսական խարդախությունների և զեղծարարությունների կանխարգելում և դրանցից պաշտպանություն:

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿՐԹՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆՆ ԱՌԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Տնտեսության արագ զարգացումը բերում է նրան, որ ընդլայնվում է ֆինանսական կազմակերպությունների կողմից մատուցվող առավել բարդ բնույթի ծառայությունների ցանկը: Ընդ որում՝ ցանկը ավելանում է ավելի արագ, քան սպառողների մեծ մասը կարող է վերլուծել նոր կամ փոփոխված պայմանները: Հաշվի առնելով այն, որ ֆիզիկական անձանց մոտ կյանքի տարբեր իրավիճակներում շատ գործարքներ այսօր տեղի են ունենում հենց ֆինանսավարկային կազմակերպությունների միջոցով, ինչպես նաև այն, որ մեծանում է զուգահեռ դերը ծառայություններից օգտվելու հարցում, հասկանալի է դառնում, թե ինչքան կարևոր են սպառողի համար տեղեկությունների հասանելիությունը և ստացված տեղեկատվության հիման վրա խելամիտ որոշումների կայացմանը նպաստող գիտելիքները: Մարդիկ ներկայումս իրենց ֆինանսական բարեկեցության համար ստիպված են ավելի շատ պատասխանատվություն կրել, քան նախկինում (օրինակ՝ պլանավորել կենսաթոշակային տարիքի համար): Բազմաթիվ սպառողներ, որոնց հասանելի են ֆինանսական ծառայությունները, չեն օգտվում դրանցից կամ օգտվում են իրենց համար անբարենպաստ պայմաններով ոչ ֆորմալ ծառայություններից (օրինակ՝ բարձր տոկոսադրույքով պարտքեր): Ֆինանսական անհրաժեշտ գիտելիքներ, հմտություններ և մշակույթ ունենալու դեպքում նրանք կօգտվեն ֆինանսական կազմակերպությունների կողմից տրամադրվող ծառայությունների հնարավորություններից և առավելություններից: Ֆինանսական համակարգի զարգացմանը զուգընթաց ավելանում են նաև վարկ վերցնելու հնարավորությունները, ինչն ավելացնում է անկառավարելի պարտքերի հետ խնդիրներ ունենալու ռիսկը: Քիչ գիտելիքներ ունեցող մարդիկ ավելի հաճախ են խնդիրներ ունենում պարտքերի հետ, դժվարանում են օպտիմալ որոշումներ կայացնել ապահովագրություն վերցնելիս, ավելի քիչ հավանականությամբ են հարստություն կուտակում և արդյունավետ տնօրինում, ավելի հազվադեպ են ֆինանսական պլանավորում անում կենսաթոշակային տարիքի համար: 19. Ֆինանսապես գրագետ անձը ավելի հազվադեպ է խարդախությունների զոհ դառնում և օգտվում կասկածելի գործարքներից, ինչպիսիք են, օրինակ, ֆինանսական բուրգերը: 20. Վերջին տարիների ֆինանսական ճգնաժամը նույնպես ապացուցել է, թե ինչքան կարևոր է այն հանգամանքը, որ անհատներն ու ընտանիքներն ունենան անհրաժեշտ տեղեկատվություն, գիտելիքներ և հմտություններ՝ ֆինանսապես ճիշտ որոշումներ կայացնելու համար: Անհատների և ընտանիքների ֆինանսական դժվարությունները կարող են բացասական ազդեցություն ունենալ լոկալ և գլոբալ շուկաների վրա: Ճգնաժամը ցույց է տվել նաև, որ անձանց և ընտանիքների

Ֆինանսական բարեկեցությունը ֆինանսական կայունության ապահովման կարևորագույն գործոններից է և ֆինանսական գրագիտության ցածր մակարդակը կարող է խոչընդոտել կյանքի կենսամակարդակի բարձրացմանը և բարեկեցության ավելացմանը: Վերոնշյալ գործոններով պայմանավորված՝ բազմաթիվ երկրներում, ինչպես նաև բազմաթիվ միջազգային կառույցների կողմից ընդգծվել են ֆինանսական կրթման և գրագիտության բարձրացման կարևորությունը:

Ֆինանսական կրթվածության բարձրացումը կնպաստի ՀՀ-ում բնակվող անձանց ֆինանսական բարեկեցության ավելացմանը: 1) Որքան գրագետ են սպառողները, այնքան նրանք առավել արդյունավետությամբ կկարողանան կառավարել իրենց բյուջեն, ավելի քիչ և հեշտ կառավարելի պարտքեր կունենան, կկարողանան խնայողություններ կատարել և դրանք ներդնելու վերաբերյալ որոշումներ կայացնել հանգուցային իրավիճակներում (օրինակ՝ երեխայի ուսում, կենսաթոշակ և այլն): 2) Ֆինանսական կրթումը դարձնում է անձանց «պատասխանատու գնորդներ»: Համեմատություն կատարելու և իրենց կարիքներին և հնարավորություններին համապատասխան ապրանքներ և ծառայություններ ընտրելու միջոցով և ֆինանսական միջոցները խելացի կառավարելու արդյունքում ազատ դրամական միջոցներ կավելանան, ինչը նրանց հետագա խնայողությունների և ներդրումների հնարավորություն կտա: 3) Ֆինանսապես գրագետ անձը առավել հեշտությամբ է բացահայտում անբարենպաստ ֆինանսական գործարքները, առավել հազվադեպ է դառնում խարդախությունների զոհ և, անհրաժեշտության դեպքում, կարողանում է պաշտպանել իր իրավունքները: 4) Ֆինանսական կրթումը անձանց տալիս է գիտելիքներ, հմտություններ և մշակույթ ֆինանսական ծառայություններից օգտվելու համար: Լինելով ֆինանսապես ներգրավված՝ անձինք կարողանում են օգտվել ֆինանսական ծառայությունների հնարավորություններից և առավելություններից (պարտք վերցնելու դիմաց ցածր տոկոսադրույք և այլն): 5) Ֆինանսական կրթումը կօգնի առավել արդյունավետ տնօրինել իրենց ֆինանսական միջոցները, օգուտներ քաղել ֆինանսական ծառայություններից, պաշտպանել իրենց ֆինանսական ռիսկերից և ֆինանսական խաբեությունից, պլանավորել ապագայի համար և այդ ամենը կնպաստի անձի ֆինանսական բարեկեցության ավելացմանը:

26. Ֆինանսական կրթվածության բարձրացումը կնպաստի ֆինանսական միջնորդության ավելացմանը և ֆինանսական կայունության ապահովմանը. 1) Հայաստանի բնակչության մեծ մասը չի օգտվում ֆորմալ ֆինանսական ծառայություններից: Այն երկրներում, որտեղ բնակչության ֆինանսական գիտելիքները և ֆինանսական ծառայություններում ներգրավվածությունը ցածր են, ռիսկ է առաջանում, որ նրանք կօգտվեն ոչ ֆորմալ ֆինանսական ծառայություններից՝ պարտք վերցնելով ծանոթներից, խորհրդատվություն ստանալով ոչ մասնագիտացված անձանցից (ընկերներից, բարեկամներից կամ հարևաններից), և «պահելով» գումարը տանը՝ բանկում կամ այլ ներդրումների տեսքով պահելու

փոխարեն: 2) Հասարակության ֆինանսական գրագիտության մակարդակի բարձրացման արդյունքում բարձրանում է նաև վստահությունը ֆինանսական կազմակերպությունների և ֆինանսական հատվածի նկատմամբ, ինչպես նաև նվազում է ֆինանսական ծառայություններից օգտվելու «վախը»: 3) Ունենալով անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ, իմանալով իր իրավունքները և պարտականությունները՝ ֆինանսապես գրագետ անձը առավել վստահորեն է դիմում ֆինանսական ծառայություններից օգտվելու համար, իմանում է ուր և ում դիմել խորհրդատվություն ստանալու և ֆինանսական ծառայությունից օգտվելու համար, օգտվում է նաև իրենց բնույթով բարդ ֆինանսական ծառայություններից (օրինակ՝ բացի բանկային հաշիվ և աշխատավարձ ստանալու համար հաշիվ բացելուց, անձը ձեռք է բերում վճարային քարտ, որը նրան հնարավորություն է տալիս ունենալ վարկային գիծ կամ օգտվում է խնայողության այլ տեսակներից, ինչպիսին է գումարի ներդրումը արժեթղթերում), ինչը հանգեցնում է ֆինանսական միջնորդության ավելացմանը:

Ֆինանսապես գրագետ սպառողը առավել զգուշորեն և գրագետ է կառավարում իր պարտքերը (ֆինանսական կազմակերպություններից վերցրած վարկերը, փոխառությունները և այլն)՝ չունենալով ժամկետանց վարկեր և նվազեցնելով ֆինանսական կազմակերպությունների վարկային ռիսկը: 5) Ֆինանսապես գրագետ հանրությունը առավել հազվադեպ է թյուր և սպակոդմնորոշիչ տեղեկատվության զոհ դառնում, ինչի արդյունքում չի կատարում գործողություններ (օրինակ՝ համատարած խնայողությունների դուրս բերում բանկերից), որոնք կարող են հանգեցնել համակարգային ռիսկի և բացասական ազդեցություն ունենալ ֆինանսական կայունության վրա: Ֆինանսական կրթվածության բարձրացումը երկարաժամկետ հատվածում կնպաստի երկրի տնտեսական աճին. 1) Հարկ է նշել, որ ֆինանսական կրթությունը կարևորվում է ոչ միայն անձի տեսանկյունից (որպես ապագա սպառող), այլև շուկայական տնտեսության տեսանկյունից: Ինչքան ավելի գրագետ են սպառողները, նրանք ավելի լավ կպատկերացնեն տնտեսության կոնկրետ ոլորտում փող աշխատելու հնարավորությունները: Հաշվի առնելով, որ ֆինանսական միջոցները իւելացի կառավարելու արդյունքում ազատ դրամական միջոցներ կավելանան, ապա դա իր հերթին կխթանի մրցակցությունը և տնտեսության հետագա զարգացումը: 2) Ֆինանսական կազմակերպությունները առավել խստապահանջ և գրագետ սպառողների կարիքները և պահանջմունքները բավարարելու համար, կառաջարկեն առավել որակյալ և բարենպաստ պայմաններով ծառայություններ, ինչը կավելացնի ֆինանսական ծառայությունների և ֆինանսական կազմակերպությունների մրցակցությունը, որն էլ դրական ազդեցություն կունենա երկրի տնտեսական աճի վրա:

Ֆինանսական կրթման ամենատարածված և ամենաարդյունավետ ձևերից մեկը դպրոցներում ֆինանսական կրթման իրականացումն է: Ֆինանսական կրթումը

անհրաժեշտ է սկսել դպրոցից, քանի որ՝ 1) Սովորույթը հեշտ է ներդնել դպրոցից: Դպրոցական կրթության նպատակը ոչ միայն գիտելիքներ տալն է, այլև սովորույթներ ներդնելը: Դպրոցական տարիքից երեխաները սովորում են խնդիր, առաջադրանք ստանալ և լուծումներ փնտրել: Սովորում են առնչվել այնպիսի խնդիրների հետ, որոնց մասին մինչ այդ ոչ մի տեղեկություն չեն ունեցել: Սովորում են բյուջե կազմել, պլանավորել իրենց ծախսերը և վերլուծել որևէ կարևոր որոշում անելուց առաջ: Հենց այս հանգամանքն է դպրոցական կրթումը դարձնում անփոխարինելի: 2) Աստիճանաբար սովորելը պարզից բարդ սկզբունքով ավելի հեշտ է, քան միանգամից մեծամասշտաբ տեղեկատվություն ընկալելը: Դպրոցական կրթության կարևոր առանձնահատկություններից մեկը տնային աշխատանքներ և տարաբնույթ առաջադրանքներ հանձնարարելու հնարավորությունն է աստիճանաբար բարդացող սկզբունքով: Այսպիսով՝ աշակերտները սովորում են ստացված տեղեկությունը օգտագործել, զարգացնել, տեսնել իրենց սխալները և թույլ կողմերը, աշխատել և կատարելագործվել: Ամեն հաջորդ ուսումնական տարում բարդացող տնային աշխատանքը հնարավորություն է տալիս տարեցտարի զարգանալ և հեշտությամբ հմտանալ խնդիրներ լուծելու հարցում:



## Հետազոտության ընթացքը

Ինչքան հաճախ ենք մենք մտածում փողի մասին: Խանութում ինչ-որ բան գնելիս, կամ առավոտյան նախաճաշի ժամանակ, կամ ռեստորանում ընթրիքից հետո: Մեզ սովորեցրել են շատ բանաձևեր մաթեմատիկայից, ֆիզիկայից, քիմիայից, բայց պրակտիկորեն ոչինչ չեն սովորեցրել այն մասին ինչի հետ բախվում ենք ամեն օր: Իսկ միննույն ժամանակ մեր կյանքի կարևոր ու նշանակալից ասպեկտներից մեկը փողն է: Մեր նյութական աշխարհում առանց փողի հնարավոր չի ոչինչ: Մակայն այդ առարկան պրակտիկորեն ուսումնասիրված չէ: Այն չի ուսումնասիրվել ո՛չ դպրոցում, ո՛չ ինստիտուտում, ո՛չ նույնիսկ ընտանիքում:

Ինչ գիտենք մենք փողի մասին: Մենք ծանոթ ենք նրա ձևավորման պատմությանը, ծանոթ ենք նրա տեսքին, գիտենք թե ինչպես կարելի է այն ձեռք բերել, գիտենք թե ինչպես այն ծախսել, և դա է պատճառը, որ մարդիկ չկարողանալով կառավարել իրենց ֆինանսները, հաճախ հայտնվում են ֆինանսապես ծանր իրավիճակում, վերցնում են վարկեր, ընկնում՝ կախվածության մեջ բանկերից:

Ինչու՞ է կարևոր յուրացնել ֆինանսական գրագիտությունը:

Իրադրություններ կյանքից.

Գրպանի թող- հաճախ երեխան կարող է կորցնել փողը, չնկատելով թե որտեղ այն կորավ: Միննույն ժամանակ կոնկրետ նպատակ ունենալու դեպքում փողերը կարելի է օգտագործել այն իրագործելու համար: Օրինակ կուտակել մի քանի շաբաթ կամ ամիս, այնքան, որ կարողանա գնել հեռախոսի նոր մոդել, կամ պատճառել ուրախություն հարազատ մարդկանց, ընկերներին, հենց իրեն՝ գնելով ոչ թանկ, բայց հաճելի բան:

Առօրյայում յուրաքանչյուր ոք ընդունում է այս կամ այն ֆինանսական որոշումը, պատասխանում է բազմաթիվ հարցերի՝ կապված անձնական և ընտանեկան ֆինանսների հետ: Ինչպես ավելացնել եկամուտը և այն դարձնել կայուն, ինչպես բաշխել ունեցած փողը որոշակի ժամանակահատվածում, ինչ գնումներից խուսափել, ինչպես կուտակել, ինչի վրա կարելի է տնտեսել, ինչի վրա չի կարելի տնտեսել, ինչպես պահպանել փողը, արժե վերցնել պարտք կամ տալ պարտք, ինչպիսի ռիսկեր հաշվի առնել այդ դեպքերում: Ընտանիքում ֆինանսական որոշումներ ընդունելիս գրագիտությունից է կախված թե կհերիքի արդյոք փողը ընտանիքի ամենաանհրաժեշտ կարիքների համար, թե այն կարող է ապահովել բարեկեցիկ կյանք նրա համար:

Անցկացրեցի դաս մաթեմատիկա առարկայից 6-րդ դասարանում <<Տոկոսներ>> թեմայի շրջանակներում՝ <<Ինչի՞ց է կախված ընտանիքի բարեկեցությունը>>: Դասարանում սովորում են 35 աշակերտներ: Աշակերտների մեջ կան և՛ բարձր առաջադիմությամբ սովորողներ, որոնք կարող են անձարոթ կամ բարդ

խնդիրների լուծումները ինքնուրույն գտնել,և՛միջին առաջադիմություն ունեցող սովորողներ, որոնք կարող են գտնել բարդ կամ անձանոթ խնդրի լուծումը ուսուցչի ուղղորդմամբ, և՛ ցածր առաջադիմություն ունեցող սովորողներ,որոնք դժվարություններ են ունենում նոր նյութը սովորելիս և անհրաժեշտ է լինում կատարել լրացուցիչ բացատրություններ:

Օգտագործելով <<մտագրոհ>> մեթոդը ձևակերպում եմ հարցադրումներ.(5 բուպե )

Ի՞նչ կսովորեմ դասից,

Ի՞նչ է պետք իմանալ ,

Ո՞ր հարցերի պատասխաններն եմ ուզում գտնել:

Աշակերտները առաջարկում են ուսումնական նպատակների ձևակերպումներ՝սովորել ինչպես որոշել թվի տոկոսը, մասը, թե ինչ է ընտանիքի բարեկեցությունը, պարզել ինչից է այն կախված, որոշել ինչպես բարձրացնել բարեկեցության մակարդակը: Թեման հետաքրքրել էր գրեթե բոլորին՝երեխաները ակտիվորեն մասնակցում էին քննարկմանը, յուրաքանչյուրը փորձում էր արտահայտվել:

Նպատակները գրում եմ գրատախտակի վրա

Դասի ընթացքը

1 Առաջարկում եմ բաժանվել 6 խմբերի (5-6 հոգի)

2 Յուրաքանչյուր խմբի տրվում է առաջադրանք (1, 2, 3 խմբերին տրվում են հանձնարարություններ, իսկ 4, 5, 6 խմբերը ստանում են համապատասխանաբար նույն հանձնարարությունները ) :` (15 բուպե)

1-ին և 4-րդ խմբեր՝

Պետրոսյանների ամսական բյուջեն կազմում է 360000 դրամ:Պարտադիր ծախսերի համար օգտագործվում է այդ գումարի 75%-ը:Կարո՞ղ է արդյոք ընտանիքը կուտակել գումար 310000 դրամ արժողությամբ նոր հեռուստացույց գնելու համար 6 ամսում, եթե ոչ անհրաժեշտ ծախսերի համար օգտագործվում է մնացած գումարի 40%-ը:

2-րդ և 5-րդ խմբեր՝

Կազմել Սարգսյանների ընտանեկան բյուջեն՝ օգտվելով հետևյալ տվյալներից.

Հայրիկի աշխատավարձը 200000 դրամ է,

Մայրիկի աշխատավարձը կազմում է հայրիկի աշխատավարձի 80%-ը,  
Տատիկի թոշակը կազմում է մայրիկի աշխատավարձի 30%-ը,  
Հայրիկի պարգևավճարը 50000 դրամ է,  
Կոմունալ ծախսերի համար ծախսվում է ամսական եկամտի 10%-ը,  
Մթերքի համար ծախսվում է 60%-ը,  
Մայրիկը գնեց կոշիկ 20000 դրամով,  
Վարկի ամենամսյա մարումը՝ 23000 դրամ,  
Մտածել, թե ինչ կարող է անել ընտանիքը մնացած գումարով:  
3-րդ և 6-րդ խմբեր՝  
Օհանյանների ընտանիքը կազմված է 5 հոգուց.  
Հայրիկը ստանում է 300000 դրամ աշխատավարձ,  
Մայրիկը ստանում է հայրիկի աշխատավարձից 30%-ով պակաս աշխատավարձ,  
Տատիկը ստանում է թոշակ՝ մայրիկի ստացած աշխատավարձի 40%-ի չափով,  
Որդին և դուստրը հաճախում են դպրոց:  
Հաշվել,թե ինչի՞ է հավասար ընտանիքի յուրաքանչյուր շնչին հասնող գումարը՝  
ա) 1 ամսում,  
բ) 1 տարում:  
Խմբերը քննարկում են նաև հետևյալ հարցերը.  
1.Բացատրել,թե ինչու են մարդկանց եկամուտները տարբեր-1,2,3 խմբեր  
2.Ինչպես բարձրացնել ընտանիքի բարեկեցությունը-4,5,6 խմբեր  
Առաջադրանքներն այնպիսին էին,որ ներառում էին և՛ պարզ հաշվարկներ և՛ միջին և՛ որոշակի դժվարություններ պարունակող խնդիրներ:Երեխաները ներգրավված էին և յուրաքանչյուրն իր ներդրում ուներ աշխատանքի կատարման մեջ:  
Գնահատում-Աշակերտները կատարում են առաջադրանքներն աշխատանքային տետրերում: Սյնուհետև 1,2, 3 խմբերը ներկայացնում են իրենց աշխատանքները,իսկ 4,5,6 խմբերը կատարում են լրացումներ: (5 բույե )

Ես ցուցադրում եմ խնդիրների լուծումները: Հետադարձ կապի ընթացքում խրախուսվում են ճիշտ քայլերն, իսկ սխալները և անճշտությունները քննարկվում են և ուղղվում: (5 բույն )

1, 4 խմբեր	Վեց ամսում կուտակված գումար	Լուծում $1.360000 \cdot 75 : 100 = 270000$ (դ.) $2.360000 - 270000 = 90000$ (դ.) $3.90000 \cdot 40 : 100 = 36000$ (դ.) $4.90000 - 36000 = 54000$ (դ.) $5.54000 \cdot 6 = 324000$ (դ.) $324000 > 310000$ , Պատասխան՝ այո
2, 5 խմբեր	Ընտանեկան բյուջեի հաշվարկ	Լուծում $1.360000 \cdot 75 : 100 = 270000$ (դ.) $2.360000 - 270000 = 90000$ (դ.) $3.90000 \cdot 40 : 100 = 36000$ (դ.) $4.90000 - 36000 = 54000$ (դ.) $5.54000 \cdot 6 = 324000$ (դ.) $324000 > 310000$ , Պատասխան՝ այո
3, 6 խմբեր	Ընտանիքի մեկ շնչին հասնող բաժինը	Լուծում $1.300000 \cdot 30 : 100 = 90000$ (դ.) $2.300000 - 90000 = 210000$ (դ.)  $3.210000 \cdot 40 : 100 = 84000$ (դ.) $4.300000 + 210000 + 84000 = 594000$ (դ.) $5.594000 : 51 = 11850$ (դ.) $6.11850 \cdot 12 = 1422000$ (դ.) Պատասխան՝ 11850դ., 1422000դ.

Եզրահանգումներ (5 բույն )

Աշակերտները ձևակերպում են, թե ինչ են սովորել դասի ընթացքում, ինչ նոր հարցեր են նրանց մոտ առաջացել, որ եզրահանգումն էր ամենադժվարը, բացատրում են, թե ինչու: Այսպիսով դասի ընթացքում սովորեցին.

1.Բարեկեցությունը դա կյանքի համար անհրաժեշտ նյութական և հոգևոր արժեքների, այդ թվում փողի, ինչպես նաև կայուն եկամուտի առկայությունն է:

2.Բարեկեցության բարձրացման համար մարդուն անհրաժեշտ է զարգացնել իր հմտություններն ու կարողությունները ողջ կյանքում:

Տնային հանձնարարություն

Որպես տնային հանձնարարություն առաջարկում եմ տանը քննարկել

<<Ի՞նչն է ազդում ընտանիքի բարեկեցության վրա>> հարցը:

Ֆինանսական գրագիտությանը վերաբերվող դաս անցկացրի նաև 9-րդ դասարանում: Դասարանում ստովորում են 32 աշակերտներ: Նախապես բաժանեցի 6 խմբի և հանձնարարեցի երկու շաբաթվա ընթացքում ուսումնասիրել 3 տարբեր բանկերում սպառողական վարկերի տրամադրման պայմանները՝ տոկոսադրույքներ, միջնորդավճարներ տույժ-տուգանքներ և այլն, ինչպես նաև համացանցից նյութեր հավաքել վարկերի մասին: (1-րդ և 4-րդ խմբերը սվյալներ կհավաքեին A բանկից, 2-րդ և 4 –րդ խմբերը՝ B բանկից, իսկ 3-րդ և 6-րդ խմբերը՝ C բանկից: ) Սկզբում երեխաները այնքան էլ չէին պատկերացնում իրենց անելիքները՝ ում դիմել, ինչպես կազմակերպել և ես դիմեցի բանկերի վարկային մասնագետներին՝ աշակերտներին ժամանակ տրամադրելու և վարկերի մասին տեղեկատվություն տալու համար և նրանք կազմակերպեցին հանդիպումը երեխաների հետ և հնարավորինս պարզ և հասկանալի ներկայացրին վարկի տրամադրման պայմանները: Որոշ երեխաներ այնքան էլ հետաքրքրված չէին և մոտիվացնելու համար առաջարկեցի ծնողներից ևս տեղեկություն հավաքել իրենց ունեցած վարկերի մասին, կամ պարզել, ուզում են վարկ վերցնել, թե ոչ: Պարզվեց, որ Հայկի ծնողները ուզում են վարկ վերցնել բայց դեռ չէին գտել լավագույն տարբերակը: Եվ այսպես հետաքրքրությունը ավելի մեծացավ և արդեն բոլորն ուզում էին ուսումնասիրել, գտնել վարկի այնպիսի տարբերակ, որը կլիներ հարմար տարբերակ Հայկի ծնողների համար:

Նշանակված օրը կազմակերպեցի դասը <<Տեքստային խնդիրների լուծումը ռացիոնալ հավասարումների միջոցով>> թեմայի շրջանակներում (երրորդ դասաժամ):

Հարցադրումների մեթոդով քննարկվեցին վարկերը, նրանց տեսակները, ինչ գիտեին աշակերտները դրանց մասին, ինչով է այն տարբերվում պարտքից և այլն:

Աշակերտները ներկայացրեցին համացանցից դուրս բերված տեղեկություններ վարկերի մասին, դրանց տեսակների, ժամկետների, ձևերի մասին:

**Վարկ** (լատ.՝ *creditum* պարտք, լատ.՝ *credere* վստահել բառերից) կամ **վարկային հարաբերություններ**, տնտեսական կատեգորիա, փողի կամ ապրանքների ձևով պարտքի տրամադրում՝ տոկոսի վճարման պայմանով: Վարկը պայմանավորվածություն է բանկի, վարկային կազմակերպության կամ գրավատան և ձեր միջև, որի համաձայն, այդ պահին ստանում եք դրամական միջոցներ/ապրանք/ծառայություն՝ հետագայում վճարելու նախապայմանով: Այն հասարակական հարաբերություն է, որն առաջանում է տնտեսության սուբյեկտների միջև արժեքի շարժի հետևանքով: Վարկային հարաբերությունները կարող է արտահայտվել տարբեր վարկային ձևերով, բանկային վարկ, լիզինգ, ֆակտորինգ և այլն: Հայաստանում վարկեր տրամադրում են բանկերը, վարկային կազմակերպությունները և գրավատները: Բանկերը և վարկային կազմակերպությունները տրամադրում են սպառողական, գյուղատնտեսական, հիփոթեքային, բիզնես վարկեր, իսկ գրավատները՝ միայն գրավադրամաբ վարկեր:

Ըստ վարկավորման ժամկետի՝ վարկերը լինում են (1 տարի).

Կարճաժամկետ Միջին ժամկետային (1-5 տարի).

Երկարաժամկետ (6-10 տարի).

Հատուկ երկարաժամկետ (20-40 տարի).

Այնուհետև աշակերտները նստեցին ըստ նախապես ձևավորված խմբերի և ստացան իրենց առաջադրանքները (1-ին խումբը ստացավ 1-ին հարցը, 2-րդը՝ 2-րդ .... )

1. Ի՞նչ է վարկը: Ինչն՞վ այն տարբերվում պարտքից: Ի՞նչն է ընդհանուր նրանց մեջ:

2. Ի՞նչ պայմաններով է հարմար վերցնել վարկ բանկից:

3. Ո՞վ և ինչպիսի՞ շահույթ է ստանում վարկից:

4. Ի՞նչպես ընտրել վարկի ընդունելի պայմաններ:

5. Ո՞ր դեպքում վարկը կարող է օգնել մարդուն ամրապնդել իր ֆինանսական վիճակը և հակառակը, երբ կարող է շատ վատացնել:

6. Արժե՞ վերցնել վարկ: Բերել << կողմ>> և << դեմ>> փաստարկներ:

Խմբերին տրվեց նաև առաջադրանք՝ պարզել, թե տրված բանկում տրված վարկը ինչպեսի առավելություններ և ինչ ծախսեր է պահանջում և իվերջո որ բանկը կառաջարկեին Հայկի ծնողներին:

A բանկի պայմաններ՝ 14,9% տ13ոկոսադրույք, երկու տարի ժամկետով (1-ին և 4-րդ խմբեր)

B բանկի պայմաններ՝ 13,9% տոկոսադրույք, երեք տարի ժամկետով (2-րդ և 5-րդ խմբեր)

C բանկի պայմաններ՝ 13% տոկոսադրույք, հինգ տարի ժամկետով (3-րդ և 6-րդ խմբեր)

Հանձնարարվեց պարզել վարկերի ամսական մարումների չափը, եթե անհրաժեշտ է վերցնել 150000 դրամ վարկ:

Խմբային քննարկումներից հետո կատարվում են հետևյալ եզրահանգումները.

1.Ֆինանսապես գրագետ մարդը վարկ է վերցնում միայն այն դեպքում, երբ նրան խիստ անհրաժեշտ է այնպիսի գումար, որը էականորեն գերազանցում է նրա եկամուտները կամ պահուստային ֆոնդը և ժամանակ չկա խնայողությունների կամ կուտակումների համար:

2.Մինչև վարկ վերցնելը, պետք է հաշվարկել, թե ինչ միջոցներով պետք է հետ վերադարձնել վարկը ըստ պայմանագրի:

3.Պետք է ուսումնասիրել որքան հնարավոր է շատ բանկեր, հատկապես ուշադրություն դարձնելով.

1.Վարկի տոկոսադրույքին և թե ինչից է այն կախված:

2.Վարկի մարման գրաֆիկին:

3.Տույժերի և տուգանքների չափերին: Այնուհետև խմբերը ներկայացրին հետազոտության արդյունքները (Ես մոտեցել էի խմբերին և անհրաժեշտ ուղղորդումները կատարել )

A բանկի համար՝

$$1.150000 \cdot 14,9 : 100 = 22350 (\text{դ.})$$

$$2.22350 \cdot 2 + 10000 = 194700 (\text{դ.})$$

$$3.194700 : 24 = 8112,5 (\text{դ.})$$

Այսպիսով՝ A բանկում ամսական մարում կազմում է 8112,5(դ.)

B բանկի համար

$$1.150000 \cdot 13,9 : 100 = 20850 (\text{դ.})$$

$$2.20850*3+150000=212550(\text{դ.})$$

$$3.212550:36=5904.2(\text{դ.})$$

Այսպիսով՝ B բանկում ամսական մարումը կազմում է 5904,2(դ.)

C բանկի համար՝

$$1.150000*13:100=19500(\text{դ.})$$

$$2,19500*5+150000=247500(\text{դ.})$$

$$3.247500:60=4125(\text{դ.})$$

Այսպիսով՝ C բանկում ամսական մարումը կազմում է 4125 դրամ

Այսպիսով, կարելի է ընտրել A բանկը, քանի որ այդ բանկում վարկի ամբողջ գումարը կազմում էր 194000 դրամ, այն դեպքում, երբ B բանկում այն կազմում էր 212550 դրամ, իսկ C բանկում՝ 247500 դրամ:

Կատարվեց գնահատում, խրախուսվեցին ճիշտ պատասխանները, բացատրվեցին թյուրմբռնումները:

Որպես տնային հանձնարարություն տրվեց մեկնաբանել՝ Ինչպե՞ս հասկանալ հայտնի ամերիկացի դերասանի խոսքերը.<< Բանկը մի վայր է, որտեղ Ձեզ պարտքով փող են տալիս, եթե Դուք չեք կարողանում ապացուցել, որ դրանք Ձեզ պետք չեն:>>



## Եզրակացություն

Ֆինանսական կրթվածության բարձրացումը կնպաստի ՀՀ-ում բնակվող անձանց ֆինանսական բարեկեցության ավելացմանը: 1) Որքան գրագետ են սպառողները, այնքան նրանք առավել արդյունավետությամբ կկարողանան կառավարել իրենց բյուջեն, ավելի քիչ և հեշտ կառավարելի պարտքեր կունենան, կկարողանան խնայողություններ կատարել և դրանք ներդնելու վերաբերյալ որոշումներ կայացնել հանգուցային իրավիճակներում (օրինակ՝ երեխայի ուսում, կենսաթոշակ և այլն): 2) Ֆինանսական կրթումը դարձնում է անձանց «պատասխանատու գնորդներ»: Համեմատություն կատարելու և իրենց կարիքներին և հնարավորություններին համապատասխան ապրանքներ և ծառայություններ ընտրելու միջոցով և ֆինանսական միջոցները խելացի կառավարելու արդյունքում ազատ դրամական միջոցներ կավելանան, ինչը նրանց հետագա խնայողությունների և ներդրումների հնարավորություն կտա: 3) Ֆինանսապես գրագետ անձը առավել հեշտությամբ է բացահայտում անբարենպաստ ֆինանսական գործարքները, առավել հազվադեպ է դառնում խարդախությունների զոհ և, անհրաժեշտության դեպքում, կարողանում է պաշտպանել իր իրավունքները: 4) Ֆինանսական կրթումը անձանց տալիս է գիտելիքներ, հմտություններ և մշակույթ ֆինանսական ծառայություններից օգտվելու համար: Լինելով ֆինանսապես ներգրավված՝ անձինք կարողանում են օգտվել ֆինանսական ծառայությունների հնարավորություններից և առավելություններից:

Ֆինանսապես գրագետ անձը պետք է կարողանա օգտագործել իր գիտելիքները, ու հմտությունները առնվազն հետևյալ ուղղություններով՝ ա. Անձնական և ընտանեկան բյուջեի կառավարում բ. Խնայողություն և երկարաժամկետ կառավարում գ. Պարտքի կառավարում դ. Ֆինանսական ծառայություններից օգտվելիս տեղեկությունների հավաքագրում, համեմատում և պատասխանատու որոշումների կայացում (արդյունավետ գնումների իրականացում) ե. Մասնագիտական խորհրդատվության կարևորում և ստացում գ. Սեփական իրավունքների պաշտպանություն է. Փողի և անձնական ֆինանսների կառավարման վերաբերյալ դրական վերաբերմունքի ձևավորում ը. Օգտվում է ֆորմալ ֆինանսական համակարգում առաջարկվող իրեն հարմար ֆինանսական ծառայություններից: 41. Սահմանումից երևում է, որ ֆինանսական գիտելիքներ, հմտություններ և մշակույթ ունենալուց բացի, ֆինանսապես գրագետ անձը պետք է կարողանա կիրառել դրանք՝ իր անձնական ֆինանսների վերաբերյալ պատասխանատու որոշումներ կայացնելու, իրավիճակին համապատասխան ճիշտ գործողություններ ձեռնարկելու և իր անձնական ֆինանսական վիճակը բարելավելու համար: 42. Ֆինանսապես գրագետ անձը պետք է նաև ձեռք բերի ինքնավստահություն՝ իր անձնական ֆինանսների վերաբերյալ

պատասխանատու որոշումներ կայացնելու, իրավիճակին համապատասխան ճիշտ գործողություններ ձեռնարկելու և իր անձնական ֆինանսական վիճակը բարելավելու համար:

Անկախ նրանից, թե որտեղ և ինչ միջոցներով է իրականացվելու ֆինանսական կրթումը, ֆինանսական կրթումն իրականացնելիս անհրաժեշտ է պահպանել հետևյալ սկզբունքները. 1) Կրթում կյանքի ողջ ընթացքում. Անձը կյանքի ողջ ընթացքում պետք է ստանա անձնական ֆինանսների վերաբերյալ հիմնական և գործնական գիտելիք, ընդ որում՝ երկու փուլով. ա. 1-ին փուլ. հիմնական գիտելիքի ստացում: Այս փուլում անձը ստանում է անձնական ֆինանսների վերաբերյալ գիտելիքի առաջնային մասը՝ ձևավորելով վերաբերմունքը (հոգեբանական-մշակութային արժեքները) փողի և ֆինանսների նկատմամբ: բ. 2-րդ փուլ. գործնական գիտելիքի ստացում: Այս փուլում անձը, հենվելով, 1-ին փուլում ստացված գիտելիքի վրա, ստանում է ֆինանսների մասին գիտելիքի այն մասը, որը պայմանավորում է անձի վարքագիծը՝ ֆինանսների և ֆինանսական ծառայությունների վերաբերյալ: 2) Ֆինանսական կրթման ուղիների և մեթոդների բազմազանություն. Անհրաժեշտ է կատարելագործել ֆինանսական կրթման գործող ուղիները և մեթոդները, ընտրել դրանցից առավել արդյունավետները, մշակել նոր ուղիներ և մեթոդներ, համապատասխանեցնել դրանք տարբեր թիրախային խմբերի պահանջմունքներին: Յուրաքանչյուր «թիրախային» լսարանի նկատմամբ պետք է ցուցաբերել առանձնակի մոտեցում և մշակել հատուկ ֆինանսական կրթման ծրագրեր: 3) Պարզ և մատչելի տեղեկատվության օգտագործում. Շատ մարդկանց համար ֆինանսները դժվար են և անհասկանալի, ուստի անհրաժեշտ է ֆինանսների վերաբերյալ տեղեկատվությունը մատուցել պարզ, մատչելի և գրավիչ ձևերով: Անհրաժեշտ է նաև անձանց չտրամադրել չափազանց շատ տեղեկատվություն և «չխեղդել» բարդ և երկար գրված նյութերով, որպեսզի անձը կարողանա ճիշտ ընկալել և ըմբռնել մատուցված տեղեկատվությունը և հետաքրքրությամբ սովորել դրանք: Շատ կարևոր է խուսափել նաև ոչ էական խնդիրներով, առանձին տեսություններով, դրանց պատմություններով, խիստ պատմական տեղեկատվությամբ գիտելիքը մատուցելու գայթակղությունից. ավելի շատ պետք է կենտրոնանալ պրակտիկ և կիրառելի այնպիսի երևույթների վրա, որոնց հետ թիրախային խմբերն առնչվելու են կամ, որոնք կարող են անմիջապես անդրադարձնալ իրենց կյանքի որակի վրա:

## Գրականություն

- 1.Ֆինանսական կրթության առարկայական չափորոշիչ և ծրագիր  
<<Մաթեմատիկա>>, <<Հանրահաշիվ>>
- 2.ՀՀ ֆինանսական կրթման ազգային ռազմավարությունը,Երևան
3. ՖԿԱՌ մշակման և իրագործման հանձնաժողով (2014)  
Ֆինանսական կոմպետենցիաների մատրից սովորողների համար,Երևան
4. ՖԿԱՌ մշակման և իրագործման հանձնաժողով (2015),Առարկաների բաշխումն ըստ տարիքային խմբերի,Երևան
- 5.Вигдорчик Е.А.,Липсиц И.А.,Корлюгова Ю.Н. <<Финансовая грамотность для учащихся 5-7 классов>> ВИТА-ПРЕСС,2016
- 6.Вигдорчик Е.А.,Липсиц И.А.,Корлюгова Ю.Н. <<Финансовая грамотность для учащихся 5-7 классов>> ВИТА-ПРЕСС,2016
- 7.Думная Н.Н.,Габови О,А.,Каримова О.В.<<Как вести семейный бюджет>>,Интеллект .центр,2010
8. Корлюгова Ю.Н.,Половникова А.В. <<Финансовая грамотность>>,методические материалы для учителя, 5-7 классы

## Հավելված

### Դասապլան

Ուսուցիչ՝ Հասմիկ Ղազարյան

Առարկա՝ Մաթեմատիկա

Դասարան՝ -6

Ամսաթիվ՝

Թեմա՝	Տոկոսներ
Օգտագործվող նյութեր՝	Դասագիրք, պատտառ
Հիմնական հասկացություններ	Տոկոս, մաս, բյուջե, բարեկեցություն, եկամուտ, ծախսեր
Դասի նպատակը՝	<i>Ներմուծել թվի տոկոսի գաղափարը, զարգացնել խնդիրների լուծման հմտությունները, սովորեցնել հաշվել եկամուտներն ու ծախսերը, ձեռք կրերեն անհրաժեշտ հմտություններ և կարողություններ տոկոսներ հաշվելու, ընտանիքի եկամուտներն ու ծախսերը որոշելու վերաբերյալ</i>
	<b>Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ</b>
Վերջնարդյունքները	<i>Աշակերտը կկարողանա Մահմանել թե ինչ է թվի տոկոսը, նկարագրել, թե ինչ է ընտանիքի բյուջեն, ինչ է ընտանիքի բարեկեցությունը վերլուծել ֆինանսական խնդիրներ, կազմել</i>

	<i>ընտանիքի բյուջեն:</i>	
<p>Գործողություններ (ժամ/տևողություն) 1. 45 րոպե</p>	Պլանավորած <b>ՈւԳ</b> ռազմավարություններ	Առանցքային հարցեր Հիմնական ստուգումներ (հանձնարարության վերջնարդյունքը նպաստում է դասի նպատակին)
<p><b>Նախապատրաստական մաս՝ 3րոպե</b></p> <p><b>Դասի ընթացքը</b> Հենքային թեմաների կրկնություն՝ (5 րոպե)</p> <p>Նոր նյութի հաղորդում՝ (15 րոպե)</p>	<p>Աշակերտների հաշվառում</p> <p>Մտազրոհ մեթոդով կրկնել այն հասկացությունները, որոնք անհրաժեշտ են նոր թեման ներմուծելու համար:</p> <p>,</p> <p>Ձևակերպվում է թվի սոկոսի սահմանումը, բերվում են օրինակեր</p> <p>Բացատրվում է, թե թվի սոկոսի միջոցով ինչպես կարելի է գտնել թիվը:</p> <p>Հանձնարարվում է մտածել, թե ինչ է ընտանիքի բարեկեցությունը և թե ինչից է այն կախված, ինչպես կազմել ընտանիքի բյուջեն, ինչպես որոշել մեկ շնչին հասնող գումարը մեկ</p>	<p><i>-Ի՞նչ է թվի մասը</i></p> <p><i>-Ինչպես են որոշում թվի մասը</i></p> <p><i>-Ի՞նչպես են բազմապատկում կոտորակները</i></p> <p><i>Ի՞նչ է եկամուտը</i> <i>Ի՞նչն է ընտանիքի բյուջեն</i></p>

<p>Խմբային աշխատանք՝ (15 րոպե)</p>	<p>ամսում, մեկ տարում:</p> <p>Աշխատանքը ավարտելուց հետո հաշվետվություն են ներկայացնում:</p>	<p>Դասարանը բաժանել խմբերի, կատարել դերերի բաշխում / յուրաքանչյուր ստանձնելով իր դերը պատասխանատվություն է կրում այն լիարժեք կատարելու/ , հստակեցնել պայմանները, որ կգնահատվի խումբի աշխատանքը և աշխատանքը կներկայացնի այն աշակերտը, որին կընտրի ուսուցիչը/ զարգացնում ենք հանդուրժողականության, առաջնորդության, արդարության բաղադրիչները: <i>Բաժանում եմ առաջադրանքների թերթիկները, բացատրում առաջադրանքները</i> <i>Ընթացքում մոտենում եմ խմբերին, անհրաժեշտության դեպքում՝ ուղղորդում:</i> <i>Աշխատանքի ավարտից հետո լսում եմ քննարկումները, ամփոփում հիմնական եզրահանգումները, շտկում թյուրըմբռնումները:</i></p>
<p>Գնահատում (5 րոպե )</p>	<p>Կատարվում է ձևավորող գնահատում: Խմբերի պատասխանները լսելուց հետո, անհատական աշխատանքներ ի համար տրվում է հետադարձ կապ և կատարում միավորային գնահատում:</p>	
<p>Տնային հանձնարարություն՝ (2 րոպե)</p>	<p>Առաջարկում եմ տանը քննարկել &lt;&lt;Ի՞նչն է ազդում ընտանիքի բարեկեցության վրա&gt;&gt; հարցը</p>	


## Դասապլան

Ուսուցիչ՝ Հասմիկ Ղազարյան

Առարկա՝ Հանրահաշիվ

Դասարան՝ 9

Ամսաթիվ՝

Թեմա՝	Տեքստային խնդիրների լուծումը ռացիոնալ հավասարումների միջոցով, ֆինանսական գրագիտություն, վարկեր	
Օգտագործվող նյութեր՝	Գրքեր, տետրեր, կավիճ, գրիչներ, խմբային և անհատական աշխատանքի թերթիկներ	
Հիմնական հասկացություններ	Վարկ, տոկոսադրույք, վարկի ժամկետ, ամսական հավասարաչափ մարումներ, տարեկան տոկոս, մայր գումար	
Դասի նպատակը՝	<p><i>Աշակերտները կսովորեն, թե ի՞նչ է վարկը, որն է նրա տոկոսադրույքը, կսահմանի, թե ի՞նչ մայր գումարը, տարեկան տոկոսը:</i></p> <p><i>Ձեռք կբերեն կարողություններ և հմտություններ հաշվելու վարկի ամսական և տարեկան մարումները: կկարողանան որոշումներ կայացնել այս կամ այն վարկատեսակի վերաբերյալ:</i></p>	
	Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ	
Վերջնարդյունքները	<p><i>Աշակերտը կկարողանա.</i></p> <ul style="list-style-type: none"> <li><i>.Նկարագրել, թե ի՞նչ է վարկը</i></li> <li><i>. Ձևակերպել ի՞նչ է տարեկան տոկոսադրույք, փաստացի տոկոսադրույքը</i></li> <li><i>.Համեմատել երկու վարկեր</i></li> <li><i>.Վերլուծել վարկատեսակները և որոշել, թե նրան ինչ ռիսկեր են ենթադրում</i></li> <li><i>Հաշվել տրված վարկի ամսական մարումների չափը</i></li> </ul>	
Գործողություններ (Ժամ/տևողություն) 45 րոպե	Պլանավորած ռազմավարություններ <b>ՈւԳ</b>	Առանցքային հարցեր Հիմնական ստուգումներ (հանձնարարության վերջնարդյունքը նպաստում է դասի նպատակին)
Նախապատրաստական	Աշակերտների հաշվառում	



<p>մաս՝ Յրոպե</p> <p>Հենքային թեմաների կրկնություն՝ 5 թոպե</p> <p>Նոր նյութի հաղորդում 15թոպե</p>	<p>Դասի նպատակին հետ ծանոթացում</p> <p>Հարցադրումների միջոցով կրկնել այն բոլոր հասկացությունները, որոնք անհրաժեշտ են նոր թեման կառուցելու համար:</p> <p>Աշակերտների ունեցած պատկերացումներն ընդհանրացնելով՝ ներկայացվում է թե ի՞նչ է վարկը, նրա տեսակները, բերվում են համացանցից հանված տեղեկություններ, սահմանվում է տարեկան տոկոսադրույքը, բացատրվում է, թե ի՞նչ է ամսական հավասարաչափ մարումը, որոնք են վարկի տրամադրման պայմանները: Բերվում են օրինակներ:</p> <p>Աշխատանքը ավարտելուց հետո</p>	<p>- ի՞նչ է թվի տոկոսը</p> <p>- ինչպե՞ս են հաշվում թվի տոկոսը</p> <p>- ինչպես է կատարվում կոտորակների բազմապատկումը, -Ինչպե՞ս որոշել ամսական մարումը</p>
---	--	--

<p>Խմբային աշխատանք 15րոպե</p>	<p>հաշվետվություն են ներկայացնում:</p>	<p>Դասարանը բաժանել խմբերի, կատարել դերերի բաշխում / յուրաքանչյուր ստանձնելով իր դերը պատասխանատվություն է կրում այն լիարժեք կատարելու/ , հստակեցնել պայմանները, որ կգնահատվի խումբի աշխատանքը և աշխատանքը կներկայացնի այն աշակերտը, որին կընտրի ուսուցիչը/ զարգացնում ենք հանդուրժողականության, առաջնորդության, արդարության բաղադրիչները</p> <p><i>Բաժանում են առաջադրանքների թերթիկները, բացատրում առաջադրանքները</i>  <i>Ընթացքում մոտենում են խմբերին, անհրաժեշտության դեպքում՝ ուղղորդում:</i>  <i>Աշխատանքի ավարտից հետո լսում են քննարկումները, ամփոփում հիմնական եզրահանգումները, շտկում թյուրըմբռնումները:</i></p>
<p>Գնահատում 5րոպե</p>	<p>Կատարվում է ձևավորող գնահատում: Խմբերի պատասխանները լսելուց հետո, անհատական աշխատանքներ</p>	

	<p>իհամար տրվում է հետադարձ կապ և կատարում միավորային գնահատում:</p>	
<p>Տնային հանձնարարություն 2րոպե</p>	<p>Որպես տնային հանձնարարություն տրվեց մեկնաբանել Ինչպե՞ս հասկանալ հայտնի ամերիկացի դերասանի խոսքերը.&lt;&lt; Բանկը մի վայր է, որտեղ Ձեզ պարտքով փող են տալիս,եթե Դուք չեք կարողանում ապացուցել,որ դրանք Ձեզ պետք չեն:&gt;&gt;</p>	

